«Հայաստանի Հանրապետությունում տոհմաբուծարանների հիմման ծրագիրը հաստատելու մասին» արձանագրային որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՈՀՄԱԲՈՒԾԱՐԱՆՆԵՐԻ

ՀԻՄՆՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունում բուծվող տավարի և ոչխարի տոհմային արժեքի բարձրացման, մսի և կաթի արտադրության ծավալների ավելացման նպատակով.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետությունում տավարի հոլշտին ցեղի տոհմաբուծարանի հիմնման ծրագիրը»՝ համաձայն N 1 հավելվածի,
2. «Հայաստանի Հանրապետությունում տավարի կովկասյան գորշ ցեղի տոհմաբուծարանի հիմնման ծրագիրը»՝ (ՀԱԱՀ-ի Բալահովիտի ուսումնափորձնական տնտեսության բազայի վրա) համաձայն N 2 հավելվածի,
3. «Հայաստանի Հանրապետությունում կիսանրբագեղմ կորիդելի տիպի ոչխարի տոհմաբուծական տնտեսության ստեղծման ծրագիրը»՝ համաձայն N 3 հավելվածի,
4. «Հայաստանի Հանրապետությունում կիսանրբագեղմ սուֆֆոլկի տիպի ոչխարի տոհմաբուծական տնտեսության ստեղծման ծրագիրը»՝ համաձայն N 4 հավելվածի:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ վեցամսյա ժամկետում մշակել ծրագրերի իրականացման ժամանակացույցները:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ՝ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ